Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 1892 ԹԻՒ 19

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ կամ ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ թոքախտէ մեռաւ ի Նոր-Նախիջեւան, Սեպտ. 3ին, ի հասակի 62 ամաց, յետ իբր 40 տարի քերթելոյ իբր ժողովրդական մեծ բանաստեղծ։ Նորա մահ արդարև անդարմանելի կորուստ մ'է որոյ վերայ բովանդակ ազգն կը սգայ ի խորագոյն խորոց սրտին, քանզի Պատկանեան ինքն եղած է իւր մշտահունչ քնարաւ և ժողովրդական պարզ լեզուաւքերթողն ա՛յն որ բուն հայ հասարակութեան խօսած և ազգային զգացումներն տարածած, գրեթէ ռամկացուցած է առաւել քան զայլս։

Մեր ներկայ թուով «ՀԱՅՆ Ի ՇԱՐԺՄԱՆ» խորագրի տակ երկար յօդուած մի կը հրատարակեմք, որոյ բովանդակն իբր նոր յայտնութիւն մի պիտի հնչէ յունկն Հայ Գաղթական Աշխարհի։

Յօդուածագիրն ականատես և մասնակից եղած լինելով այդ շարժմանց, գրած է իրրև քաջ իրազեկ ոմն Հայոց այժմու ոգւոյ և տրամադրութեանց վիճակին ի Հայաստան։ Ոգւոյ այդ վիճակ Հայուն համար բոլորովին նոր բան է, յորմէ՝ օրինաց զօրութեամբ՝ պիտի աղբերանան նորանոր դէպքեր։

Մեք յօդուածն կը հրատարակեմք այն համոզմամբ թէ Հայաստանի մէջ տեղի ունեցած այդ նշանակիչ դարձուածներն ամեն Հայու ծանուցան՛լ լաւ է։ Ինչո՞ւ իբրև գաղտնիք պահեմք այն բաներ զորս թուրք տեղական կառավարութիւնք և կեդրոնն լաւ գիտեն. ինչո՞ւ Հայ եղբարք իրենց եղբարց տրամադրութեան ու խլրտմանց ագէտ մնան, քանի որ թշնամին քաջ գիտէ այդ ամենն։

Վուսթրրէն այս տարի բազում թղթակցութիւններ հասած են մեզ տեղւոյն ազգային գործերն և խռովութիւններն նկարագրող և Արժ. առաջնորդն ամբաստանող։ Այդ կարգէն երկու նամակ ստացանք ճիշդ այս վերջին օրեր, զորս հրատարակել մերժեցինք, յետ երկար մտածութեան, ինչպէս մերժած էինք առաջիններն։ Թէև թղթակիցք՝ քաջ իրազեկ բոլոր անցիցն՝ կը թուին գրած լինիլ առանց կրից և առանց դիւզաբանութեան, չեմք կարծեր թէ անկարգութեանց դարման կը լինի հրատարակութիւնն։ աւելի պատշաճ և օրինաւոր միջոցներ կան։

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յեղափոխական Տրամադրութիւն Տաճկահայոց. — Հայն ի Շարժման.— Ռաֆայէլ Պատկանեանի Թաղումը.— Ռաֆայէլ Պատկանեանի Յիշատակին. Ժողովրդային Ախտաբանութիւն.— Հնտախտէն Ազատ մնալու միջոց.— Քաղաքական Ազգային և զանազան Լուրեր։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԱՀԱՅՈՑ

Դժուարահաւատալի բայց ստոյգ իրողութիւն մ'է թէ Տաճկաստանի հայ ժողովուրդն նշանաւոր փոխակերպութիւն մի կրած է յընթացս վերջին ամաց և արդէն յօժար է իւր արիւն թափելու ի գին ազատութեան։

Անցեալ տարի քիչ մնաց որ Խարբերդու, Արաբկերի, Տիգրանակերտի և այլ մերձաւոր քաղաքաց հայ ժողովուրդն, երիտասարդ և ծեր, այր և կին զինեալ ոտքի ելնէին և սկսէին սոսկալի պայքար մի զեղծ կառավարութեան դէմ։ Թուրքն նչմարած էր իւր անարգեալ դրացւոյ նոր տրամադրութիւնն և երկիւղախառն ցասկոտութեամբ կը վարուէր անոր հետ. Բ. Դուռն ալ իրազեկ էր և ստիպեց զՍրբազան Աշըգեան ազդու յորդոր կարդալ ժողովրդեան որ հանդարտ մնայ և չանսայ մոլորեցուցիչ «սրիկայից։» Այնպիսի Պատրիարքի այնգունակ կոնդակն յոչ այլ ինչ կրնար ծառայել բայց եթէ աչքերն կարմրած ժողովուրդն աւելի դրգռելու. հակառակ ամենայն սրբազան յորդորանաց և անսուրբ սպառնալեաց Հայք պիտի կրնային ապստամբութեան ահագին փորձն ընել բաւական ընդարձակօրէն եթէ շարժման կազմակերպիչն եղող անձն չձերբակալուէր։

«Հայք ի շարժման» խորագրով երկայն թղթակցութիւնն զոր ներկայ թուով կը հրատարակեմք, չպատմեր ամենայն ինչ, բայց կը պատմէ բաւական ի ցուցնել թէ մինչև ո՛ր աստիճան յեղափոխական խմորումն յառաջ գնացած է Տաճկահայոց մէջ։

Կ'ըսէինք թէ Հայն պարտի իւր բազկի յուսալ և ոչ օտարին. ահա նա իւր բազուկ բարձրացուցած է։

Կը քարոզէինք թէ ներքին ոյժ պէտք է — եթէ մարսնչող և անձնուէր տրամադրութիւն ըսել կ'ուզէինք ոչ թէ կանոնաւոր բանակ—այդ ոյժ գոյացած է։

Կը ցանկայինք որ յեղափոխականն մի քանի հոգի չլինէին այլ ժողովուրդն ինքն, հասարակութիւն կոչուած մեծ զանգուածն. ահա ժողովուրդն իսկ յեղափոխական ուիւնով արբեցած՝ պատրաստ է ամենայնի։

Այս զարմանալի է։ Դարաւոր ճնշման ներքև տրկարացած հայ ժողովուրդն ուժի անակնկալ նշան կուտայ, և այնքան կը տաքնայ որ գրեթէ կարող կը լինի իւր վերայ կոխող ահագին ճնշման յաղթել և եռալ։ Ոչ Թրքին միայն այլ և յաչս Եւրոպացւոյն զարմանալի է այս։ Աչխարհ չէր հաւատար թէ Հայերն ևս Ցունաց պէս ընդունակ են գրգռուելու. թէ շահավաճառութեան անձնատուր եղած հայ ժողովուրդն ալ կարող է քաղաքական համոզումներով արբենալ, և թէ ամեն տեսակ հաչուողութեան վարժուած անհատներ կրնան ամեն հաչիւ մոռնալ և ամեն ինչ տալու, զոհելու պատրաստ լինիլ անգին ազատութեան համար։

Մինչև անգամ հայազգի խորհողաց շատերն կը նան ապշիլ տեսնելով հայ ժողովուրդն այսքան շուտ տաքցած և եփելու մօտեցած։

Այո՛, Տաճկահայոց այդ նոր տրամադրութիւն ըսքանչելի է, և կը փութամք յաւելուլ թէ սարսափելի ալ է։

Այո՛, վերջին մի քանի տարիներու մէջ կատարուած փորձն իբրև Հայկական հոգեբանութեան փորձ մեծ նշանակութիւն ունի. անոր շնորհիւ գիտեմք այժմ թէ հայ ժողովուրդն որքան մղում կը պահանջէ յաւիւն գտնելու համար. սակայն չմոռնանք նաեւ թէ փորձն վտանգաւոր է յոյժ, քանզի կրնայ, եթէ կատարեալ ճարտարութեամբ ի գլուխ չելնէ, յանգիլ յարհաւիրս և ի մահաբեր քայքայումն։

Այն կուսակցութիւն որ այդ փորձի գլխաւոր փորձարարն եղաւ, մեծ արութեան ապացոյց տուաւ, և այն անձն որ Արաբկերի ու Խարբերդու կողմերն մասնաւորապէս յուզեց՝ յանձն առաւ գիտակցօրէն այնպիսի ահագին պատասխանատուութիւն զոր միայն հզօրագոյն ոգիք կրնան սոսանձնել։

Սակայն այդ անձ կամ այդ կուսակցութիւն ցոյց տուա՞ւ խոհեմութիւն հաւասար արութիւն, ծրագրե՞ց խորին հմտութեամբ սկիզբն միջոցն և կատարածն, ի հաչիւ առա՞ւ ամենայն պատահականութիւն։

Հարցն ծանրակշիռ է, և վճռական պատասխան տալ դժուար։

Առ հասարակ զինեալ ոտքի ելնելու համար նշանակուած կամ ակնկալուած ժամանակէն քիչ առաջ մեծ և միակ դործիչն ձերբակալուեցաւ, որով Հայերն մնացին անգլուխ և անառաջնորդ. զէնք և ռումբ մնացին վար, խանդ և եռանդ իջան, և տակաւ հանդարտութիւն տիրեց, հանդարտութիւն մի որ յուսախաբ թուլութեան սահմանակից է։

Այդ ատենէն սկսաւ հայ և Թուրք յարաբերութեանց նոր շրջան մի։ Թուրքերն տեսնելով թէ Հայք ոչ ևս կ'եռան, հաւատացին թէ փորձն վիժած է ի գործ դրուելէ առաջ, և իրենց առջի երկիւղախառն զգուշաւորութիւնն փոխուեցաւ ցասմնալիր խստութեան։ Հովիւն զարկած լինելէ յետոյ սկսան ոտքի տակ կոխոտել ոչխարներն։ Որպէս թէ իրենց առջի վախին համար ամաչելով սկսան ծայրայեղ խստութեամբ վրէժխնդիր լինիլ, և քան զամենայն աննշան և անկարեւոր բաներ պատրուակ առնելով ձեռնարկեցին նեղել, ծեծել, հայհոյել, բանտարկել, կողոպտել և աքսորել Հայերն։ Սմա ըսին թէ դու մօրուք ունիս, նմա թէ դու բարձրայօն կ'երևիս, այլում թէ դու մեր ջուրը կը պղտորես քսան քայլ վարէն խմելով, կօշկակարին՝ թէ դու ձի կը հեծնես, վաճառականին՝ թէ դու տասն տարի առաջ «Հայաստա՛ն» ըսած ես։— և տարին ու բերին, նեղեցին ու քամեցին քսակն։ Գաւառներու ամեն կողմէն մեզ հասած լուրերն յորդառատ օրինակներ կը բերեն ընդհանուր հարստահարութեանց բազմապատիկ յաճախելուն։ Եէնիչէրիներու օրովն իսկ այդպիսի բաներ չէին պատահեր այդքան ընթացիկ կերպիւ։

Միայն Թուրք կառավարութիւնն չէ որ կը քննէ և կը չարչարէ, բոլոր Թուրք ժողովուրդն կատղած է Հայոց դէմ. Թրքեր այլ ևս առեւտուր չեն ըներ Հայոց հետ, եթէ առնելիք ունին, իսկոյն կ'ուզեն, եթէ պարտք ունին, կը մերժեն վճարել։ Մասնաւոր թշնամութեամբ կը վարուին հարուստ Հայոց հետ, և ամեն միջոցաւ զայնոս աղքատացուցանել կ'ուզեն որպէս զի հայ տարրն բոլորովին և ամեն կողմանէ տկարանայ. այդ պատճառաւ է որ այնքան բազմաթիւ հարուստ Հայեր ձերբակալուեցան այս տարի Բալու, Արաբկեր, Արմտան, Մարաշ, Եւդոկիա, Շապին գարահիսար, Մարսուան, Ակն և այլ քաղաքներու մէջ. միայն Արխան Օղլու Արմտանի մէջ ոչ նուազ քան 3000 լիրա կորոյս չնչին ամրաստանութեանց երեսէն։

Ի հակիրճ բան, Թրքահայոց տառապանքն այս տարի կատարեալ եղած է։

Եւ անուրանալի է թէ նեղութեանց ցայս աստիճան սաստկացումն անմիջական հետեւանքն է Հնչակեան գործիչին վիժեալ փորձին։ Նոյնպէս յայտնի է թէ այդ վիժման պատճառն գործիչն ձերբակալումն եղաւ։ Արդ, միթէ նա պարտական չէ՞ր կանխաւ ի հաչիւ առնուլ այդ ձերբակալման պատահականութիւն և անոր հետեւանքն. պարտական չէ՞ր, եթէ արդարև Հնչակեան կուսակցութեան կեդրոնին հետ պաշտօնական յարաբերութիւն ունէր, կանխաւ մօտն ունենալ տեղակալ մի։

Այժմ ալ Սասնոյ կողմերն նոյն կուսակցութեան մէկ գործիչն զՀայս յապստամբութիւն կը շարժէ։ Ո՛վ որ է այդ անձ, արդեօք հաչուո՞ղ է պատահականութեանց աւելի քան զմիւսն։ Սասնոյ կողմի վերջին շարժումներն, թէև դուցէ չափազանցութեամբ տեղեկագրուած, մեզ կը թուին հաւատալի. բայց ի՞նչքան կրնայ տարածուիլ, ո՞րքան կարէ դիմանալ և ի՞նչ արդիւնք կրնայ տալ— ոչ ոք գիտէ։

Եւ սակայն կայ ամբոխն որ կը համակրի այդ կուսակցութեան. կան հայրենասէր երիտասարդներ որք հանգանակութիւններ կը բանան ինպատ անոր. հեզհետէ կը շատնան անոնք որք զՀնչակեան կուսակցութիւն կը համարին իբրև ճշմարտիւ այն որ պէտք է Հայաստանի ազատութեան ահագին գործն վարելու համար։

Մեք ևս գոհութեամբ կը յայտարարեմք մեր անկեղծ համոզում թէ Հնչակեանն է այժմ գոյութիւն ունեցող միակ յեղափոխական կուսակցութիւնն՝ այդ անուան արժանի. բայց երբ բաղդատաբար լաւագոյնն է կ'ըսեմք, ըսել չեմք ուզեր թէ է այն ինչ որ պարտէր կամ կարէր լինիլ։ Կը սքանչանամք նոցա գործունէութեան և անխոնջ եռանդին վերայ, նոցա արութեան և ժրութեան վերայ, գիտեմք թէ նոցա գլխաւորներն ուսեալ են. բայց դժբաղդաբար չեմք կարող համակրիլ իրենց ընկերվարական գաղափարաց. ուսեալ ըսել անմոլոր ըսելէ (ամեն մոլորութիւն և անհեթեթ գաղափար ծնած է ուսեալ, խորհող ուղեղներէ կամ համալսարաններէ։) Ինչ որ աւելի քան զայդ քննադատելի կը գործէ Հնչակեան կուսակցութիւնն, է այն զի առանց նախապատրաստութիւններն կատարելագործելու՝ կ'ճապարեն ի գործ։ Յորժամ սմն կը շարժէր Խարբերդու դաշտն, կեդրոնական Հայաստանի մէջ ոչ ոք կար կազմակերպիչ։ Սասունն, Զէյթունն, Խարբերդն, Տիգրանակերտն, Կարինն ևն ևն ընդհանուր կազմակերպութեան մի մասունքն չեն յօրիներ, այդ այլ և այլ կեդրոններու մէջ վարիչներ չկան մի մեծ ընդհանուր կեդրոնի հետ կապուած. ուստի և շարժումներն կա՛մ կը վիժին կա՛մ կը լինին մասնակի, փոխանակ լինելու միասնական, և արդիւնքն կը լինի ադմուկ մանաւանդ քան յաջողութիւն։

Զգործել յանցանք է. յախուռն գործել աւելի մեծ յանցանք է։ Հայաստանի ժողովրդական մեծ զանգուածին հետ խաղալ Հայ ցեղին մահու կամ կենաց վճիռն պատրաստել է. կը պաղատիմ, եղբա՛ր, ահիւ և գոգութեամբ գործեցէք, մի լինիք չափազանց յանձնապատան և վաղվաղկոտ, մեծ և ընդարձակ միջոցներ պէտք են մեծ և ահագին գործն կատարելու համար։

ՀԱՅՆ Ի ՇԱՐԺՄԱՆ

Հայն կ'ընթանայ դէպ յեղափոխութիւն, մերթ իբրը գիտ որնթաց որ գուռմամբ ջրվէժներէ վար կը ժայթքէ փրփրած, ու մերթ զերդ վըտակ հեզասահ որ մարմանդից մէջէն կ'անցնի լռիկ և սքողեալ։ Եթէ Հայն չէ՝ կ'ածի յեղափոխական լինիլ, որպէս մանկիկն կ'ածի մարդ լինիլ։

Ո՞չ ապաքէն համայն աչխարհ տեսաւ զայս «Հայկական շարժում», շարժում ի Կարին, շարժում ի Պոլիս, շարժում ի Զէյթուն, շարժում յԱրաբկեր, շարժում այլ ուրեք։ Հայք ի շարժման են, կը հպին միմեանց և կը կազմակերպին։ Ո՞չ ապաքէն զայս ապացուցին կաթողիկոսական ընտրութեան. ժողովին պատուիրակք, որք միաձայն «Հայրիկ» գոչեցին, առանց Սուլթանէն վախնալու ընտրեցին մարդ մը որ այս մարդակերին ամենացանկալի սրսն էր՝ դրուած իրմէ շատ բարձր վանդակի մը մէջ։

Հայն ամենուրեք ի շարժման է։ 2 Ամ նախ քան զայս այցելեցի զՄուշն և իւր գիւղերն Հայաբնակ, տեսայ Քրդաց բարբարոսական շարժումն կասաղի՛ զերթ փոթորիկ և շարժումք Հայոց զերդ ալիս որ կը փութային դէպ եզրն ազատութեան։ Վարդենիսի մեծ դէպքը պատահած օրը Մշոյ քաղաքին մէջ էի, ուր յատկապէս կը լսէի Քրդաց յսխորանաքն թէ «վաղը կամ միւս օր պիտի կոտորեմք զՀայս», և հայ երիտասարդաց ալ պաղարիւն պատասխանն թէ «արդէն իսկ պատրաստ եմք մեռնելո՛ւ, Աստուած մեծ է»։ Նոյն ատեններն Խնուս գացի և հոն ալ բոլոր Հայերն ի շարժման գտայ։ Բազումք երիտասարդաց կը ստիպէին զիս որ ըսեմ թէ իրենք ի՞նչ ընելու էին, ի՞նչ կրնային ընել ի նպաստ Հայկական շարժման։

Տարի մի յառաջ Հայն մեծ շարժման մէջ էր Արաբկերի, Տիգրանակերտի և Խարբերդի մէջ։ Վերջնոց շարժումն յաւէտ մարմանդի մէջէ հոսող հեզասահ վըտակի նման յաներևոյթս կը գնար, իսկ Արաբկեր իբր զետ որնթաց սկսեց փրփուր ու թնդիւն հանել. յորժամ սոսկաց տեղւոյն կառավարութիւն ու սարսափահար եղաւ թիւրք ժողովուրդ, Խարբերդէն զօրք խընդրեցին, ուրկէ նոսանոր զօրագնդեր ու թնդանօթ ղրկուեցան դէպ Արաբկեր։

Այս շարժումներ միայն հայկական չէին, զի բաւական քիւրտ ցեղեր դաշնակցած էին ընդ Հայս, թիւրք կառավարութիւնն յանակնկալս պիտի տեսնէր այն հէք ու ստրկացած Հայերն (զորս իբր հաւեր կը նկատէր,) այլ և մայր հաւ եղած, որ զերդ մոլի հուր պիտի յարձակէին իւր վերայ ահարկու զօրութեամբ ցնցել զինք ու փշրել ոսկերքն։ Զայս շարժում ծրագրողք գիտակից էին իրենց բարոյական ու նիւթական ուժերուն, որոց փոքրիկ նմոյշներն տեսնելու պատիւն ունեցաւ նոյն իսկ կառավարութիւնն ու սոսկաց հանդերձ իւր ժողովրդով։ Սակայն Աստուած այնքանս բաւ համարեց, ու այս շարժման շոգւոյ խողովակը դարձուց մէկուսի մեքենաներէն և առ ժամանակեայ դադրեցոյց գործը։ Կառավարութիւնը յաջողեցաւ բռնել զայն որ այս շարժման կաթսային տակ վառող հուրն էր, բանտարկեց և ապա բարձր պաշտօնէիւ ղրկեց զայն դէպ Իկ. Պոլիս։ Տիմա՛ր կառավարութիւն, Սամսոնէն խոյս տուաւ նա և կրկին Հայաստանի սրտին մէջ կը գործէ նա առաւել մեծ զօրութիւն յառաջ բերելու։

Այս շարժում յուսահատական է։ Որպէս Մեծն Աղէքսանդր երբ օտար աչխարհներ կ'արշաւէր, իւր զօրաց եաւէն կամուրջներն կը քանդէր, որպէս զի նոքա ետ դառնալու անկարելիութիւնն տեսնելով՝ միշտ միայն յառաջ խաղալն մտածէին, նոյնպէս Հայ ժողովրդեան եաւէն Աստուած, նոյն իսկ թշնամւոյն ձեռամբ, քակել կ'ուտայ կամուրջներն։ Հայուն այլ ևս իւր թշնամւոյն գիրկը հանդստանալու ամեն կարելիութիւն կը վերցուն!։ Առաջ երբ Հայը շատ կը հարստահարուէր կ'ըսէր «կառավարութեան կը բողոքեմ,» իսկ այժմ կը տեսնէ զայն անգթագոյն ոճրագործաց ու անազորոյն աւազակաց խումբ մի դարձած մանաւանդ Հայուն համար։ Բաւ է որ թիւրք մի ըսէ Հայու մը համար թէ «իմ կրօնիս հայհոյեց,» և ահա զՀայն կը նետեն ի բանտ, որպիս Մէզրէսի պայտարն և Մուռեցի Պետրոսն բանտարկեցին այս պատճառաւ, որոց և ոչ մին զայդ յանցանք գործած էր։

Խարբերդու տէֆտէրտարն իմ բարեկամս եղող մէկ սեղանաւորէ մը փոխ դրամ ուզած էր, որ չէր աբուած. և ուստի տէֆտէրտարն ըսած էր անոր. «դժուար չէ քեզ ևս սեւ կառքը նստեցունել։»

Հայն երբեմն երբ կառավարութեան մէջ կը կորուսանէր զիւր արդար դատ, կ'ըսէր «Հեռագիր կուտամ ի Պոլիս,» իսկ այսօր Հայուն համար այս օրինակ բան մի ըսելն «յեղափոխութիւն» է և պատիժն է աքսոր։ Այսօր ի Հայաստան հասարակ ոստիկան մի նոյն ինքն Սուլթանն է, և ուստի անոր դէմ խօսիլ Սուլթանին դէմ խօսիլ ըսել է։

Այս Հայկական շարժումնք ընդհանուր են. — զի առ հասարակ կը տեսնուի սա ոչ միայն արանց այլ և կանանց մէջ, ոչ միայն երիտասարդաց այլ և օրիորդաց մէջ, ոչ միայն չափահասից այլ և մանկանց մէջ։ Եթէ երթաս Արաբկեր, պիտի տեսնես հոն կազմակերպեալ կանանց խմբեր Ամազոնաց նման զինեալ ու արի։ Եթէ երթաս դպրոցաց մէջ պիտի գտնես աղջկանց խմբեր միացած՝ որք կը խորհին թէ իրենք ի՞նչ կրնան ընել Հայկական այս շարժմանց մէջ։ Եթէ երթաս մտնես մանկանց մէջ հոն ալ նոյն հուրն վառուած պիտի տեսնես, որաց համար պիտի ստիպուիս ըսել թէ գերբնական ձեռք մի կը վառէ հոն։ Անցեալ տարի երբ իրիկուն մի կը պատրաստուէի ձին հեծնել և հեռաւոր մի գիւղ գը նալ, 2ու կէս տարեկան մանչ գաւակս մօտեցաւ ինձ ու ըսաւ, «Հայրի, ո՛ւ, պի է թա», (Հայրիկ ո՞ւր պիտի երթաս) ըսի այս ինչ գիւղը, ապա հարցուց ձեռքիս հրացանին համար, «թվէն ինչո՞ւ ես առէ, ադա՞ր պիտի պանես,» ես չհասկցայ, անկէ 2 տարի մեծ եղող եղբօրն հարցուցի որ բացատրեց թէ, հրացան ինչո՞ւ առեր ես էսքէ՞ր (զօրք) պիտի սպաննես։ Մենք երբէք այսպիսի կամ ասոր նման բաներ մեր տանց մէջ պարզ խօսած չեմք, որ կրնան փոքրիկներ ըմբռնում ունենալ, այս մեծ գաղափարն այդ մանկան սրտին մէջ ո՞րպէս զետեղուած է. ո՞րպէս այդ փոքրիկ միտքն կրցեր է իմացումն կազմել այդ կնճռուտ խնդրոյ վերայ որոյ դեռ անհաս կը գտնուին շատ չափահաս մտքեր։ Եթէ Աստուած չներշնչեր, ո՞վ կարող էր ներշնչել այսպիսի խորհուրդ ու ըզգացում կաթնկեր մանկան մի սրտին ու մտքին։ Ահա ժամանակը, եթէ «մարդիկ լռեն քարերն պիտ աղաղակեն ու մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գոհութիւն կատարեցի։

Մենք չափահասքս հայկական շարժման յառաջապահքն ենք, եթէ մենք կորսուինք մեր մանուկներն մեր եաւէ կուգան։

Ամենայն ինչ նոր այժ կուտայ Հայկական շարժմանց։

Դեռ քիչ ամիսներ անցած են երբ Պոլսի «Փունջ»ն կը քծնէր Սուլթանին արիւնաշաղախ գահին շուրջ և կը բարբանջէր ընդդէմ երկու պատուական և սիրելի անձանց։ Մինչ ինք «Երիքովի ճամբուն վերայ անկեալ վիրաւորին վէրքերէն ելած սրոյն վերայ լերդացած արիւնն կը լափէր և նոյն ատեն արիւնաթաթաւ բերնով «վաչուէր և բախտախնդիր» կ'անուանէր զայն երկու անձնուէր անձինք որք իրենց արտասուաց ու արեան բաղադրութեամբն սպեղանի կը դնէին տարաբախտ վիրաւորին վիրացն վերայ, եթէ չէին կրնար վերցունել՝ գէթ կը գըր-

կէին, և եթէ չէին կրնար բուժել՝ գոնէ կը համբուրէին զայն կաթոգին։

Երբ այն «մարդասիրական» յօդուածն (ըստ «Փունջ»ի) մտաւ ի Խարբերդ, արդէն եղած շարժման նոր զարկ մի տուաւ։ Ո՛ պատուական ընթերցող, իցիւ թէ հոն լինէիր յայնժամ ու տեսնէիր անոր յառաջ բերած զարմանալի ժողովրդական յուզումն, ամեն կողմ պիտի գտնէիր բազում հայ սրտեր՝ որք զերդ ալիք ծովու կը ծփծփային ոչ միայն տանց այլ և շուկային մէջ, պիտի տեսնէիր իրար անցում մի, ոմանք կը թքնէին այդ թերթի վերայ, ոմանք ոտքի տակ կ'առնուէն, ոմանք կը պատռէին։ Սոյն յօդուածի շնորհիւ շատ քողի տակ պահուած հայրենասէր սրտեր երևան ելան, շատ պատուաւոր ու պաշտօնական անձինք, որք յաւէտ ազգատեաց կ'երևէին մեզ, զայրացած իրենց ազգասիրական գոյնը դուրս տուին։

Պատրիարք հօր կոնդակներն ևս, որք կը հրաւիրէին ճնշեալ ժողովուրդն հարստահարասիրութեան, բռնաւորասիրութեան, բանտասիրութեան, կեղեքելասիրութեան, ի մի բան Սուլթանասիրութեան, (թող ներէ ընթերցողն սոյն խորթ բարդմանցս) մանաւանդ ցանեցին ժողովրդեան վիրացն վերայ։

Մինչ Սուլթանի դատարանքն ու մայր դատարանքն ի՛սկ լեցուած են զրկելոց արտասուօք և աղիողորմ լացերով, մինչ ամեն տեղ դրամն կը տիրէ օրինաց ու արդարութեան վերայ, մինչ մահմետական մոլեռանդութիւնը միշտ քրիստոնեան ոտքին տակ կուզէ տեսնել և անոր լացովն ու հեծեծանօք կը հրճուի, մինչ Հայուն բախտը մոտնիչի մը և կամ Թուրքի մը բարկացած լեզուէն կախեալ է, մինչ բազում անմեղ հայեր զրպարտութեամբք բանտերն ու աքսորավայրերն կը լեցուին, որոցմէ ոմանք իրենց տրուած անտանելի տանջանաց չի դիմանալով կը մեռնին, մինչ մեր գեղանի կոյսեր ու հարսունք այլ ևս ոչ միայն կ'առեւանգուին այլ և բանտերն կը տարուին, մինչ հայ յղի կինը իւր զաւակ բանտին մէջ իսկ կը ծննդաբերէ, (որպէս Հաճինցի գիւղացն կինը մանչ զաւակ մի ծնաւ բանտին մէջ, երեք ամիս առաջ երբ սա արձակուեցաւ Էքքէի աքսորավայրէն, եռամսեայ մանկիկն իւր գրկաց մէջ էր, զոր ծնած ատենն ըսած էր «թէ մանչ լինի Հայոց թագաւոր, իսկ թէ աղջիկ լինի թագուհի պիտի լինի,» ուղիղ վարդապետութիւն, զի համայն մարդկութեան թագանորն ալ եղան մսուրին մէջ ծնաւ։)

Կ'ըսեմ մինչ Սուլթանը զհայ ժողովուրդ լեցուցած մի բարբարոս և ոճրագործ ժողովրդեան ու կաշառակեր և անիրաւ պաշտօնէից հնձանին մէջ, իւր հսկայ ոտիւքն ամուր կը ճմլէ զայն որմէ արիւն ու արցունք կը վիժին, Պատրիարք հայրն պատգամ կուտայ իւր ժողովրդեան «Բարերար Հայոց» ճանչնալ զՍուլթան Համիտ Բ., և աղօթել նորին բարեխնամութեան երկար կենացը և բարօրութեանը համար։ Ահա Հայն միայն մէկ անբռնաբարելի, անկեղծ և անխառն բան ունէր իւր և իւր Աստուծոյն մէջ, ու ահա Սուլթանի հրամանաւ մեր հոգեւոր հայրն զայն ևս բռնաբարութեան կը մատնէ և կը թողու որ շողոքորթութիւն և կեղծիք խառնուին անոր մէջ։ միայն աղօթքի մէջ ազատ էինք և ահա զայն ևս ըստ հաճոյս բռնաւորին պիտի ընենք։

Որպէս ըսի այս ժողովրդեան այրած վիրացը վերայ մանաւանդ ցանեց։ ժողովուրդը ցնցուեցաւ իւր շարժման մէջ, և սկսեց աւելի մօտենալ իւր ի՞նչ վիճակի մէջ լինելու գիտակցութեանը, և «ի՞նչ ընենք»ի կենսական հարցման։

Զարմանալի էր տարի մի առաջ տեսնել Հայկական շարժման ազդեցութիւն ի վերայ զինուց գնոյն։ 80—100 դահեկան հազիւ արժէք ունեցող զէնքեր կը ծախուէին 3—400 դահեկանի, և գնողներն իրարու ձեռքէ յափշտակել կ'ուզէին, վաճառականք իրենց ուշադրութիւնը այս յոյժ շահաւոր գործին դարձուցին։ Թիւրք բարձրաստիճան զինուորական մը յանկապէս, ոչ զինուորական հարիւրաւոր բազմահարուածեան ատրճանակներ բերել կուտար և կը վաճառէր Հայոց ու շատ մեծ շահ կ'ընէր, իւր մէջքը և ձին ոսկեւորեց։ Կառավարութիւնը տեսաւ իւր զինարանէն կը պակսէին 40 զինուորական հրացան։ Գիտնալու էք թէ զէնքը գնող ժողովուրդը գիտակից էր ի՞նչ աւուր և ինչ բանի համար գընելուն։ կը գնէին առանց վախի, յաւէտ ուրախութեամբ դրամ չունեցողներէն ոմանք իրենց տանը ձաւարը (պուլկուր) վաճառեցին և անոր գնովն զէնք առին, ակնկառոյց և յուսալից հարցընելով թէ «Երբ պիտի գայ զայն գործածելու օրը»։ ժողովուրդը տխմար չէհամարիք այս անվախութեանը համար, զի նա գիտէր թէ իւր տկար զէնքէն զատ ուրիշ ի՞նչ բարոյական ու նիւթական զօրութիւն կային իրեն վասն։

Արժանապատիւ ոմն կը դրէր ինձ Տիգրանակերտէ «Տէրն արժանացունէ զմեզ իբր զոհք արիւնաթաթաւք, զոյգ պառկիլ հայրենեաց փրկութեան զոհիսեղանին վերայ, ուր (Աբելի զոհին մէջ վառուած հրոյն նման) մեր արենէն բռնկի ու բոցափայլի հուրն ու լոյսն ազատութեան։»

Այս շարժմանց ծրագրողն ու կազմակերպողն թող յաչս «Փունջ»ի «վաստչուէր ու բախտախնդիր» լինի, իսկ դու ով պատուական ընթերցող, եկ պահիկ մի դիտեմք զայն լրջմտութեամբ։

Պարոն Շմաւոն դեռ հազիւ 28 տարեկան մի առոյգ, աշխոյժ, բարեձև, կրակոտ աչքերով, առիւծակերպ դէմքով ու լայնալանջ մի երիտասարդ է։ Զաւակ է բաւական հարուստ ծնողաց։ Փեթրսպուրգի համալսարանի ընթացքն յաջողութեամբ աւարտելէ վերջ, Գերմանիոյ համալսարանաց միոյն մէջ ևս ընթացաւարտ եղած է։

Զայն տեսնող Թիւրք պաշտօնեայք զարմացումն կը յայտնէին նորա նկատմամբ։ Ռէշիտ Էֆ. որ մեծագոյն խելացի մարդն է Խարբերդի Թրքաց մէջ, անգամ մի հիացմամբ ըսաւ, Շմաւոնի պէս հանճարեղ, գիտուն ու ճարպիկ մարդ չկայ ամբողջ Թուրքիոյ մէջ։

Շմաւոն մեծ ու բարի ոգի մ'ունի։

Մինչդեռ ինք Խարբերդու բանտին մէջ էր, խորհեցանք ու բաւական կարգադրեցինք միջոցներ որովք զինքն փախցունէինք բանտէն։ Ինք մեզ կը գրէր թէ, «եթէ Պոլիս տարուիմ գիտեմ պարագայք (այս և այն են) եթէ չսպաննուիմ անշուշտ ցկեանս պիտ բանտարկուիմ», իսկ մեր նամակին պատասխանեց թէ, եթէ իմ ազատման համար ձեր ընելիք ձեռնարկին մէջ ոևէ անձի վնասուելու վտանգ կայ չեմ ուզեր որ ձեռնարկէք։» Վերոյիշեալ պատասխանն ևս աչօքս կարդացի, և ուստի դատէ ազնիւ ընթերցող թէ Պարոն Շմաւոն ի՞նչ ոգւոյ տէր մարդ է։

Շմաւոն շատ մի ոստիկաններով ու փոլիսապետով դրկուեցաւ դէպ ի Պոլիս, որ ըստ բանին փոլիսապետին «Սամսոնի պանդոկին մէջէն տան ձեղունը բացուեցաւ ու չըզթայներով յերկինս ամբարձաւ...։

Մահուանէ հազիւ մա ապուր լինելէ վերջ մեզ գրեց թէ, «Թէպէտ անձնական ու հանրային շահեր կ'ըստիպեն զիս որ յեւրոպա անցնիմ. իսկ հանրութեան շահը առաւել հոս մնալս կը ստիպէ, վասն որոյ պիտի մընամ մինչև ոսկերցս փտաիլն մինչև որ յոյսերս իրականանան։»

Հայն ի շարժման է։ Կը շարժեն զայն ոչ միայն անձնուէրք այլ Թիւրք բարբարոսն և հայ մատնիչն ևս, ուստի ըստ նոր վախճանեալ մեծ ու վսեմ ազգասիրին, Պատ. Մարտիրոս Շմաւոնեանի։—

Շարժէ Հայ տղայ,
Շարժման մէջ կեանք կայ,
Շարժում չունեցող,
Թող մտնէ ի հող։

ԳԵՂԱՄ

ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Օգոստոսի 22ին, երեկոյեան ժամ 7ին, ծանր և երկար հիւանդութիւնից յետոյ, անմխիթար դրութեան մէջ վերադարձած Կիսլովոդսկից Նոր-Նախիջևան, Քամառ Քաթիպան փչեց իր վերջին շունչը։ Իսկոյն ուղարկուեցան բոլոր կողմերը հեռագիրներ, կազմվեց մի խումբ որի գլուխ կանգնեց մեծապատիւ քաղաքագլուխ Մինաս Պալապանեան· որոշվեց, որ հասարակութիւնն իր հաշուով կատարէ թաղման հանդէսը։ Բարեկամներին յայտնի էր, որ բանաստեղծի ջերմ ցանկութիւնն էր թաղվել Էջմիածին, բայց նրա այդ կամքը, զանազան պատճառներով դոնէ առ այժմ անիրագործելի երևաց։ Համեմատ ժողովրդի կամքին, Պ· քաղաքագլուխը և ս· Լուսաւորիչ եկեղեցու աւագ քահանայ Զարիֆեան՝ ամսոյ 23ին՝ առաւօտեան, հեռագրեցին Էջմիածին—կաթողիկոսի տեղակալին, խնդրելով թոյլատուութիւն թաղել անմահ բանաստեղծին ս· Խաչ վանքի բակի մէջ՝ Միքայէլ Նալբանդեանի և Ալամդարեանի կողքին։ Տեղակալը անմիջապէս ուղարկեց իր օրհնութիւնը և հաճութիւնը, ժողովրդի կամքը յարգելով։ Երեկոյեան, Գրիգոր Զալխուշեանի հաշուով, քանդակագործ Վիկենտիյ Կօվալեվսկիյ Գամառ-Քաթիպայի դէմքը գիպսով ծածկեց, դրանից կիսարձաններ չինելու համար, որը, պայմանագրի համեմատ, Պ· Կօվալեվսկի պէտք է վաճառէ մէկը հինգ ռուբլով։ Օգոստոսի 24ին առաւօտեան սկսվեց թաղման հանդէսը։ Դագաղը, 21 պսակներով զարդարված, բարեկամները և ազգականները դուրս բերին։ Արհեստագիտական դպրոցի մօտ, որը հիմնել է ինքն բանաստեղծը, դռների վրա խոշոր տառերով գրելով իմաստալի առածը՝ «բանուկ ձեռքը չի մուրալ», հանդիսաւոր գնացքը կանգնեց։ Ապա տարան ս· Լուսաւորիչ եկեղեցին· սկսվեց պատարագը, որի ժամանակ ժողովրդի միջից անցնելով մօտենում հանգուցեալին և դագաղը զարդարում էին նոր պսակներով, որոնց վրա փայլում էին հետևեալ բառերը՝ «Հիմնադիր տեսչին արհեստագիտական դպրոցի», «Մայր Արաքսի երգչին», «Ազգային երգչին», և այլն, և այլն։

Դագաղը դրին դիակառքի վրա և ուղեւորվեցին դէպ ի ս· Խաչ, 30—40 կառքերով։

Ս· Խաչի վանքը 7 վերստ հեռու է քաղաքից և մի երեւելի պարտէզ ունի· վանքը սարի վրա է· բակի մէջ կան 5—6 գերեզմաններ որոնց թուում արևելեան կողմում՝ Ալամդարեան յայտնի գործչի գերեզմանը, իսկ արևմտեան կողմը թաղված է Միքայէլ Նալբանդեան։ Այս բարձրութիւնից տեսարանը սքանչելի է· ստորոտում ահագին ծառեր՝ բարձրացած գլխները դէպ ի երկինք, ձախ կողմը երեւելի աղբիւր, որի ջուրը հոսում է պարտիզի միջով, աջ կողմը ուրիշ աղբիւր, «Սալբիս Սու» և ամառանոցներ, ուղղակի վանքի պարտիզի առջև լայնածաւալ դաշտը «օրթայ-օպայով», որտեղից բացվում է Նոր-Նախիջևանի տեսարանը···

Երբ կառքերը կանգնեցին պարտիզի դրան առաջ, դագաղը նորից տարան ձեռքով ամբողջ պարտիզի միջով և բլրի գագաթը դուրս բերեցին եկեղեցու մօտ· տեսարանը տպաւորութիւն էր թողնում բոլորի վրա։

Սկսվեցին ճառերը· առաջինը կարդաց ուսուցիչ Վահան Քերլիեան Գրիգոր Զալխուշեանի ճառը, որ գրված էր ռուսերէն և քերլիեան էր թարգմանած հայերէն· ճառի միտքը հետևեալն էր՝ 41 տարի ազգային բանաստեղծը աշխատել է, մինչև իր վերջին շունչը չը թողնելով ոգեւորված գրիչը իր ձեռքից· այդ աշխատանքը ոչ թէ չտուեց նրան հարստութիւն, այլ և չապահովացրեց նրան, բայց նրա անունը անմահացած է, նրա երգերը կպան ամեն մի հայի սրտի, նրա երկերը ամբողջ սերունդ սնուցին· բայց ամեն անգամ, երբ մի մեծ մարդ յայտնում է իր մտքերը, նրան ծանր հալածանքներով հալածում են, ինչպէս և մեծ բանաստեղծին, որովհետև նա միշտ մատնանիշ էր անում մեր պակասութիւններին։ Յետոյ ճառի մէջ յիշում է Պատկանեանի նշանակութիւնը մեր գրականութեան մէջ և նրա քանքարի ծաւալին և առ հասարակ բանաստեղծի ծառայութեանը ազգային խորանի առաջ։

Ապա կարդաց պ· Բողդանեան՝ արծարծելով այն միտքը, որ միայն դարեր են ծնում այդպիսի քանքարոակայն չտեսաւ նա մեզնից այն սէրը, յարգանքը, որ իրաւունք ունէր պահանջելու· բոլոր հայաբնակ քաղաքները աչքերը դարձրած էին Նախիջևան, բոլորը հետաքրքրվում էին· ինչ էր պատճառը այդ հետաքրքրութեան—Բաֆայէլ Պատկանեան, որն իր քանքարաւոր քնարը մի կողմ դրած, ողբում էր իր վերջի օրերը····

Բողդանեանից յետոյ պ· Զուպարեանը խօսեց այն մասին, որ Պատկանեանի քնարը հասկանալի էր միանգամայն և ժողովրդին և ինտելիգէնցիային· իսկ ուսանող պ· Մ· Բերբերեան ուշադրութիւն դարձրեց պատկանեանի նշանակութեանը ուսանողների համար դեռ յիսունական թուականից։ Պ· Մ· Բալաբանեան կարդաց քանի մի հեռագիրներ՝ Էջմիածնից, Քիշնևից, Մօսկվայից· հասնելով պ· Սունդուկեանի հեռագրին, արտասուքը խեղդեց նրան, հեռագիրը վերջացրեց պ· բժ· Ծառուկեան։ Վերջինը կարդաց պ· Զուպարեան պ· Քերլիհանի գեղեցիկ և ազդու ոտանաւորը։

Վերջապէս պ· Պալապանեան հանգանակութիւն արաւ և 20 րոպէի մէջ յօգուտ բանաստեղծի գերդաստանի ապահովութեան ժողովեց 1000 ռուբլի։ Սպասում ենք Թիֆլիսի ինտելիգենցիայի օգնութեանը։

Գր· Զալխուշեան

(ՄՇԱԿ)

ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Քաղցրախօս պովէտ», կապուեց յաւիտեան
«Քու անոյշ լեզուն», էլ չես խօսելու·
«Ներդաշնակ քնարդ», սփոփիչ հայութեան
Լռեց, աւա՛ղ մեզ, էլ չենք լսելու։

Ի՜նչ վսեմ մտքեր, ազնի՛ւ ձգտումներ
Արծարծում էիր երգերով սահուն·
Նոցա լսողը յափշտակվում էր,
Թէ որ իւր կրծքում ունէր սիրտ զգայուն։

Ուսանողական զուարթ կաճառում,
Վարժատներում, ուրախ խրախճանում
Եւ Մէլպօմէնի շքեղ տաճարում
Միշտ քո երգերով էինք զուարճանում։

Սէր էիր երգում—սիրով բորբոքում
Թէ ծերին և թէ երիտասարդին·
Ամենքի սիրտը վշտով մորմոքում,
Երբ ողբդ նուիրում ազգի աղէտին։

Սիրելի եղար դու Հայոց ազգին·
Թէև չդրեց գլխիդ դափնէ պսակ,
Բայց քո յիշատակն անմահ, թանկագին
Աւանդ կը թողնէ զաւակէ զաւակ···

Գ· ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

(ԱՐՁԱԳԱՆՔ)

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱԽՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՆՐԷՔ

(Շարունակ. Տես նախորդ թիւն)

Գ

Մանրէից վերայ այս համառօտ ծանօթութիւնք կ՚օգնեն մեզ հասկնալու թէ ինչպէս կարելի է ոչնչի չափ փոքր այդ արարածոց պատճառ լինիլ այնքան ախտերու և այնպիսի սոսկալի համաճարակներու :

Թունաւոր օձի մի խայթուածն մէկ մարդ կրնայ սպաննել . բայց փոշւոյ չափ մեծութիւն չունեցող մանրէից աննշմարելի քանակն կը զօրէ մարդ մի հիւանդացունել և մեռցունել, և մարդէ ի մարդ, քաղաքէ ի քաղաք, երկրէ յերկիր լռիկ մնջիկ ընթանալ և կոտորել այնքան բիւրաւոր մարդիկ որքան ահաւորագոյն փոթորիկն կամ Քրուփի որոտագոռ թնդանօթք չկարեն :

Օձի թոյնն, կամ այլ ո և է թոյն, ինչպէս ափիոնըն, մկնդեղն և այլն, վնաս կ՚ընեն իրենց փոքր կամ մեծ քանակութեան համեմատ, իսկ ախտաբեր մանրէք երբ միանգամ մուտ գտնեն մարմնոյն մէջ, իբրև թշնամի գաղթականներ կը հաստատուին, մի քանին կը լինին շուտով մի քանի միլիոն, սերունդք սերնդոց ետեւէն կուգան հեղեղօրէն, և մարմնոյն ոյժերն կուտեն, կարեւոր հիւթերն կը սպառեն, և իրենց վնասակար արտաթորումներն կը խառնեն մարմնոյ հիւթերուն . այնպէս որ մարմնոյն մաքրիչ գործարաններն—երիկամունք, քըրտանց գեղձք, աղիք են— քան զսովորականն շատ աւելի կը ստիպուին աշխատիլ մարմնոյ փտութիւններն դուրս արտաքսելու : Զարմանալի՞ է ուրեմն եթէ այս պայմանաց մէջ—երբ թշնամիք մարմնոյն ոյժերն կ՚ուտեն ճիշդ այն ատեն երբ գործարանք քան զսովորականըն աւելի գործ ունին և աւելի ուժի կարօտ են— եթէ հիւանդութիւնն յաղթանակէ և մարդն մեռնի :

Զարմա՞նք է միթէ որ դեռ երէկ ուժով աշխատող գործաւորն այսօր հնտախտէ բռնուելով մեռնի վաղիւ՝ այնպէս չորցած և սպառած որպէս թէ հարիւր տարի հիւանդ եղած լինէր :

Կրնամք դիւրաւ հասկնալ նաև զայն թէ ինչո՛ւ տարափոխիկ ախտ մի հիւանդէն առաջին փոխադրուելէն օրեր կամ շաբաթներ յետոյ միայն երևան կ՚ելնէ, մինչ օձէն խայթուածն կամ թունաւորեալն նոյն ժամայն կը սկսի չարչարուիլ .— պատճառն այն է զի փոքրիկ ախտին գործիչքն մանրէք լինելով, սոքա ժամանակ կ՚ուզեն մարմնոյն դռնապաններն սպաննելու և ներս մտնելով բնակութիւն հաստատելու, բազմանալու և չարիք գործելու համար :

Տղայ մի կրնայ պահ մի մնալ ծաղիկ կամ հարսանիթ ունեցողտղու մի մօտ, և տուն վերադառնալէն շաբաթ մի կամ շաբաթներ յետոյ միայն ինքն ևս ծաղիկ կամ հարսանիթ բռնուիլ .— ինչո՞ւ :

Ճամբորդ մի այս ինչ լճի եզրն մէկ գիշեր անցունելէ օրեր յետոյ, շատ հեռու քաղաքի մի մէջ կը սկսի դողցունել .— ինչո՞ւ :

Կատղած շուն մի մէկուն սրունքն կը խածնէ թեթեւ կերպիւ, և միայն շաբաթներ կամ ամիսներ յետոյ հէք մարդն կը բռնուի կատաղութեամբ և կը մեռնի չարաչար .— ինչո՞ւ :

Պատճառն մի և նոյնն է . մանրէն ժամանակի կարօտ է մարմին կոչուած քաղաքին պահապանաց դէմ մարտնչելով քաղաքն աւերել սկսելու համար :

(Շարունակելի)

ՀՆՏԱԽՏԷՆ ԱԶԱՏ ՄՆԱԼՈՒ ՄԻՋՈՑ

Ի Փարիզ հրատարակուած նոր գիրք մի, որ հընտախտէն զերծ մնալու վերայ կը խօսի, շատ պարզ և ազդու միջոց մի նշանակած է :

Հաստատուած է դիտողութեամբ և փորձով թէ տղոց կանաչ փորքշուքին մանրէն, ինչպէս նաև եւրոպեան հնտախտի մանրէն, «ասիտ լաքթիք» թթուին չեն դիմանար, ուստի և այդ թթուն յիշեալ ախտերուն իբրև դարման կը գործածուի : Այժմ կը թուի բաւական ըստոյգ նաև այն թէ բուն ասիական հնտախտի ստորակետաձև մանրէն ալ նոյն և ուրիշ թթուներու առ հասարակ չդիմանար : Ցէւռան ցուցած է նաև թէ ստորակետաձև մանրէն աննման այլոցն, կարող է կաթնաշաքարըն խմորել և այդու բարգաւաճիլ յոյժ : Այս ծանօթութիւն կը բացատրէ ուրեմն թէ ինչո՛ւ անոյշ պտուղներն այնքան վնաս կ՚ընեն հնտախտի համաճարակի ատեն : Ուրեմն պտուղներէ զգուշանալ պէտք է այդ ատեն, որպէս արդէն հանրային փորձառութիւնն ալ ցուցած է :

Ջուրն եռացունել ապահով միջոց մ՚է մանրէներն սպաննելու, բայց աւելի դիւրին միջոց մ՚է, ըստ հեղինակի վերոյիշեալ գրքին, լեմոնական թթու (ասիտ սիթրիք), (ամեն մէկ փռանսական լիտր ջրոյ համար 60 կամ 80 սանթիկռամ) դնել ըմպելի և կերակրոյ ջրին մէջ : Ատոր փոխանակ կարելի է դնել ասիտ լաքթիք կամ ասիտ թառթռիք, կամ ասիտ քլոռիտռիք :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—Պելճիքացի զօրավար Պրիալմոն, որ Սուլթանին կողմանէ կոչուած էր ի Կ. Պոլիս, յայտարարած է թէ հարկ է բոլորովին նորէն շինել Տարտանէլի և Պոսֆորի ամրութիւններն, ի մուտս Սև Ծովուն :

—«ԱՐԱ.» անունով անգղիերէն ամսաթերթ մի հրատարակուիլ սկսած է ի Կալկաթա խմբագրութեամբ Մեծ. Տիար Մէլիք Պէկլարի : Այս հրատարակութեան որոշիչ հանգամանքն պիտի լինի, որպէս կը ծանուցանեն խմբագիրն և տնօրէնն, Հայկական խնդիրն իբրև քաղաքական խնդիր քննել այնպէս լիովին և այնպիսի ազատութեամբ որում արժանի է : Մեր արի հայրենակցաց յաջողութիւն և տոկունութիւն կը մաղթեմք իրենց այս դժուարին ձեռնարկի մէջ :

—Վիէննայի երաժշտական ցուցահանդէսին մէջ, շընորհիւ Վիէննայի Մխիթարեան Հարց, Հայկական երաժշտութեան բաժին մ՚ալ կազմակերպուած է, որ շատ ուշադրութիւն գրաւած է :

Տիար Զերազ հետևեալ նամակն ուղղած է Տիար Կլատսթընի՝ Նիւ Եորքի Հայոց խնդակցական հեռագիրն նմա հաղորդելու առթիւ, ինչպէս կը գտնեմք Թերթին Սեպտ. թուոյն մէջ .—

«Տէր,

Պատիւ ունիմ յղել ձեզ ներփակեալ հեռագիրն զոր այս պահուս ստացայ Նիւ Եորքի Հայ Գաղթականութենէն : Այս գաղթականութիւն, զոր իմ ազնիւ բարեկամ Տիար Ճէյմս Պրայս պատեհութիւն ունեցած է շատ մօտէն ճանաչելու, կը պարունակէ իւր մէջ բարձր ուսման տէր անդամներ և կը ներկայացունէ իրօք Միացեալ Նահանգաց գլխաւոր հայ գաղթականութիւններն, այն հազարաւոր Հայեր որք ստիպուած են յերեսաց ի-

րենց բռնաւոր հալածչաց խոյս տալ մինչև յԱմերիկա ի խնդիր ապաստանարանի։»

Ահաւասիկ պատասխանն ևս զոր Տիար Զերազ ըստացած է հետևեալ օրն։—

«Տէր,

Ցանձն եղաւ ինձ Տիար Կլատսթընէ, հանդերձ իւր շնորհակալեօք յայտնել ձեզ ընդունելութիւնն Նիւ Եորքի Հայ Գաղթականութեան հեռագրին զոր նմա փոխանցելու պատիւն ըրիք նմա։

Եմ, Տէր, ձեր հնազանդ ծառայ
ՍԲԷՆՍԸՐ ԼԻԹԼԹԸՆ»

—Ֆռանսերէն նոր գիրք մի հրատարակուած է ի Փարիզ, աշխատասիրութիւն Տիար Jules Leclercqի, Նախագահի Պելճիքական Աշխարհագրական Ընկերութեան։ Գրքին անունն է Voyage au mont Ararat, ուղեւորութիւն ի լեառն Արարատ, յորում հեղինակն կը պատմէ իւր վերելքն ի Մասիս, և կը վերջացունէ հետաքրքրական դիտողութեամբք Հայաստանի և Հայկական Խնդրոյն վերայ։

—Պարսկաստանի Թաւրիզ քաղաքէն կը գրէ մեզ թղթակից մի, Օգ. 30 թուականաւ, հետեւեալ տողերը։ «Քաղաքիս մէջ հնտախտէ մեռնողներու թիւն 26, 000 է ըստ հեռագրական տեղեկութեան, որ հայրդուեցաւ ի Թեհրան։ Այժմ մահացութեան թիւն գրեթէ օրական 30ի իջած է։ Իսկ Ռուսիոյ մէջ, սովէ, հնտախտէ և մահտարաժամէ մեռնողներու թիւն հարիւր հազարներով պէտք է համրել։— Հնտախտն ի Սալմաստ և յՈւրմի նոր սկսած է. ի Խոյ և ի Մաքու կը շարունակէ ահագին կոտորածն։ Քաղաքիս Հայերն մեծ մասամբ փախան շրջակայ ամարանոցներն, իսկ մնացելոց հարիւրին 25ն մեռան, այն է իբր 90 հոգիք, ի համարի որոց թեմական առաջնորդ Ստեփանոս Մխիթարեան Սրբազան, որ անձնազոհ լինելով ննջեց, և ժողովուրդն այժմ խորապէս կը զգայ նորա կորուստն։

«Մի նորօրինակ դէպք տեղի ունեցաւ Կասպից ծովուն մէջ. կը պատմեն թէ մի գիշեր սաստիկ չառաչիւն լսուած է և մի ասաղ թռած է. հետևեալ օրն մի սեւ մեծ քար կար վեց կանգնաչափ խորութիւն ունեցող ջրին մէջ. յետոյ կամաց կամաց խորասուզեցաւ քարը և անհետացաւ եղաւ։

Թղթակից մի կը գրէ մեզ հետևեալն.— Մէկ քանի օր առաջ Ֆրէզնոյէն նամակ մի ընդունեցի, գրեալ այս ամառ անդ գաղթող Հայէ մը, որկէ մէկ քանի տողեր ասա կ'օրինակեմ։ «Մենք բաւական աղէկ ենք ընտանիքով և երկու զաւակներով և կապրինք ողջ և առողջ Աստուծոյ ողորմութեամբ։ Մենք այստեղ աւելի կը սիրենք և կը սեպենք թէ աղէկ ըրինք որ եկանք. ըստ իմ կարծիքիս այստեղ աւելի աղէկ է ընտանիք ունեցող Հայոց համար։ Աշխատասէր մարդուն գործ պակաս չէ, աւելի դիւրութիւն կայ տուն ունենալու և ապրուստ ճարելու։ Այժմ խաղող ժողվելոյ ատեն է և ամեն մարդ զբաղած է. ես կը գործեմ 1,75 սէնթ օրականով, ճամբու համար ըրած պարտքիս 30 թալէրը արդէն վճարած եմ և մնացորդ պարտքս ալ քիչ ժամանակէն անշուշտ կարող պիտի ըլլամ վճարել։ Ֆրէզնոյ հասնելէս յետոյ երկու հայ հարսանիքներ ունեցանք, մին էր Յովակիմ Վարդանեան և օրիորդ Ֆիլիզեան, և միւսն՝ Պօղոս Ազատեան և Տր. Մելքոնեանի դուստր Վիրգինիայ։

—Տիար Պ. Կ. կը գրէ մեզ Պոսթընէն թէ անցեալ շաբաթ Պոսթընի Հայոց ընկերութիւնն ի նիստ գումարեցաւ և գրաց թանգարան մի հաստատելու վրայ խորհեցաւ։

—Տիար Ց. Ց. կը գրէ մեզ Շիքակոյէն փափաքելով ինչ ինչ թիւր տեղեկութիւններ ուղղել, և կը ծանուցանէ թէ փիանոյի Ֆինիշը են անդ Գրաճեանք (ոչ թէ Բարաշեան։) Նաև կը ցուցնէ թէ տեղւոյն Հայերն բաւական ընթերցասէր են և բազում հայ թերթեր կ'ըստանան Պոլսէն, Եւրոպայէն և Ամերիկայէն։

—«Մշակ» տեղական ռուս լրագրէ մի առնլով կ'ըսէ թէ «Նորերս Կ. Պոլսոյ դեսպանատունը հեռագրով առաջարկութիւն ստացաւ արտաքին գործերի մինիստր Գիրսից, որով մինիստրը առաջարկում էր էլի մի քանի կարեւոր լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքել Հայոց կաթողիկոսական թիկնածու Խրիմեանի մասին։ Դեսպանատունը արդէն հաւաքել է այդ տեղեկութիւնները և ուղարկել Պետերբուրգ։»

—«Արձագանք» կաւկազ լրագրէն առնլով կըսէ թէ «Մուշի ճանապարհին անցեալ շաբաթ դարձեալ յարձակուել են հայ վաճառականների քարվանների վրայ և թալանել նրանց։ Աւազակները դեռ ևս գտնուած չեն։»

—«Արձագանք»էն կը տեղեկանամք թէ այս տարի Սանասարեան վարժարան 23 ընթացաւարտ ընծայած է ազգին. այսպէսով անցեալ և այս տարուան ընթացաւարտներից թիւն կը հասնի 43ի։ Շրջանաւարտ 43 հոգւոց մեծ մասն գնացեր են իրենց հայրենիք՝ ուսուցողութեամբ պարապելու նպատակաւ, մնացեալք իրենց ծնողաց մօտ առեւտրական գործերով են զբաղած, քանի մի հոգի մնացեր են վարժարանին մէջ դասատուութեան վարժուելու համար, իսկ մի քանին ալ դպրոցի խնամակալութեան կողմանէ ուղարկուած են արտաքսման գիտութեանց և արուեստից մէջ կատարելագործուելու համար. համաձայն լուսահոգի հիմնադրի կտակին։ Սանասարեան վարժարանն անցեալ 1890—1891 դպրոցական ամում ծախք է ըրեր 3700 օսմ. լիրա, որ գոյացած է հետևեալ մտից— հիմնադրի կտակի տոկոս 1500 լ., 85 աշակերտներէ՝ 1700 լ., երաժշտութեան վարձ՝ 120 լ. ի կալուածոց՝ 150 լ., յախտոռոց՝ 80 լ., այլև այլ 30 լ. —ընդ ամենն 3700 լիրա։

Ոչ այն զոր կ'ուտես, այլ այն զոր կը մարսես՝ կ'ընէ զքեզ զօրաւոր։

Ոչ այն զոր կը շահիս, այլ այն զոր կը խնայես՝ կ'ընէ զքեզ հարուստ։

Ոչ այն զոր կը կարդաս, այլ այն զոր կը յիշես՝ կ'ընէ զքեզ բանդէտ։

—Տիկին Հնանոյշ հակառա՞կ է, կ'ըսէք, սանուց և սանուհեաց ի միասին դաստիարակուելուն։

Օ՛, այո՝, հակառակ է բոլոր ուժով. նորա կարծեօք այնպիսի զգուշութեամբ պարտ է մեծցուցանել աղջիկ մի որ երբ մարդ մի տեսնէ, հարցնէ «Մայրի՛կ, ի՞նչ է սա։»

—Դասատուն.— Հրա՛նդ, ըսէ նայիմ քանի ոսկոր ունիս բոլոր մարմնոյդ մէջ։

Հրանդ.— երկու հարիւր և ութ։

Դասատուն.— Սխա՛լ. միայն երկու հարիւր և եօթն ունիս։

Հրանդ.— Այո՝, բայց այս առտու ի նախաճաշուձկան ոսկոր մի կուլ տուի։

— Փոքր աղջիկ մի որում յիշեցուցին թէ առանց «Հայր մեր»ըսելու սկսած էր կերակուր ուտել. խնայարհեցոյց գլուխն և մեղմիւ ըսաւ «Ներեցէք, ամէն։»

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի ։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ ։

«ՄԱՐՋԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան ։ բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեան, գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 ֆրանք ։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան ։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

— «ՀԱՅՔ»ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէռ 5 սէնթի ։

ՓՈԽԱՆՐԿՐ

Թուրքիա դրամ ղրի
րիկայի մէջ կրնայ տալ այ
այնչափ վստահութիւն որ
մեծ տունն որ ճիւղեր ունի.
Եւրոպիոյ նշանաւոր քաղաք
որ դրամ ղրկել կ'ուզեն
վստահութեամբ դիմել ա
եան,

Հայե՛ր
Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ո և է արական հանդերձեղէնի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժան ։

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.
ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way
46 և 47դ Փողոցներուն միջեւ
Constantinople Bazaarի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի Թրքական մեծաքանակ ձեռագործներ (embroidery) գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառականութեամբ, և անոնց եւս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանոպետներուն ։ Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն ։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

N. DESCHAMPS
Ն. ՏԷՇԱՆ

Վուսթըրի Main (Մէյն) փողոցին 259դ թիւ խանութըն դիմացկուն և աժան կօշիկներ և մոյկեր կը վաճառուին ։ Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ ։ Փորձէ և պիտի համոզուիս ։

MARK F. COSGROVE
ԿՕՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ՐԸՊՊԸՐՆԵՐ
78 Front St.,Corner Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կօշիկի րըպպըրներ ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն ։

RIPANS TABULES

RECULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY
16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն ։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԴԵՂԱԳՈՐԾ
(հաստատեալ ի 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ